

իսկ² յանձն³ իւր⁴ կրթեր⁵ զաւեր աշխարհին Յայոց, վասն որոյ եւ⁶ մեծաւ ա-
նարգանաւ յուղարկեցաւ⁷ ի տուն⁸ իւր, ⁹սակայն զկապելոցն ոչ երբեք չա-
րախաւս կամեր լինել¹⁰ մինչեւ ցաւր¹¹ վախճանի կենաց իւրոց:

33 Իսկ յերանելեացն¹² բազումք ի Նոցանէ¹³, որ¹⁴ մանկագոյնքն¹⁵ էին,
ուսան զդպրութիւն հայրենի աշխարհին իւրեանց, եւ¹⁶ եղեւ¹⁷ Նոցա այն կե-
րակուր¹⁸ հոգեւոր, որով զանձինս քաջալերէին եւ զընկերսն¹⁹ մխիթարէին²⁰:
34 Եւ²¹ այնպէս զմայլեցան ի միտս եւ յոգիս²² իւրեանց, զի եւ²³ որ ծերա-
գոյնքն էին²⁴ ի Նոցանէ, փափկացան մատաղացան մանկացան: 35 Չի²⁵ թե-
պէտ եւ²⁶ դպրութեան²⁷ ժամանակքն²⁸ անցեալ էին²⁹, սակայն բազում³⁰
սաղմոսս³¹ ի բերան³² առեալ՝ հոգեւոր երգակից լինէին մատաղերամ բազ-
մութեան մանկտւոյն³³:

1 Չէ չիք ի

2 ԳԴԵԸԺԽՅ ինքնին իսկ

3 Ե յանձին

4 Տ՝ ինքնին յանձն իւր

5 ԹԼԾԿՅ կրեր փիւ կրթեր

6 Դ չիք եւ

7 Թ ուղարկեցաւ

8 ՎՏՅ ի տունն

9 Բ սակայն վասն սրբոցն ոչ կամեցաւ չարախոս լինել ԴՎ ոչ երբեք կամեր չարախոս լինել

10 Ի լինիլ

11 ԳԴԵԸԼԽԿՅ յօր

12 ԲՎ երանելեացն

13 Ե ի Նմանէ

14 Ի չիք որ

15 ԲԿ մանկագոյնք

16 ԵԸԺԼԽ չիք եւ

17 Ա եղէն

18 Բ այն Նոցա ի կերակուր ԼՏ՝ հոգեւոր կերակուր

19 Վ զանձինս իւրեանց ԱԴԻ զընկերս Թ զնկերս

20 ԲՉԷՎ չիք եւ զընկերսն մխիթարէին

21 Բ չիք եւ

22 Բ ի յոգիս Խ եւ ի հոգիս

23 ԲԴ չիք եւ (որ)

24 Բ ի Նոցանէ էին

25 Դ չիք Չի

26 ԳԼ չիք եւ

27 ԲՏ՝ ժամանակն դպրութեան

28 ԳԵԺԽ ժամանակն Դ ըստ դպրութեան ժամանակն

29 Տ՝ անցեալ էր Բ էր փիւ էին

30 Բ չիք բազում

31 ԱԲԴԹԻՏՅՅՅ սաղմոս

32 Բ ի բերան Նոցա

33 Լ մանկանցն